«Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա, ի խորհրդոց նորա, ի գնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրահրմանց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա, և յամենայն չար գործութենէ նորա հրաժարելով հրաժարիմք».

Յոհան Մանդակունի։ ԺԱՄԱԳԻՐՔ։

ԱՂԵՐՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ.

Քեզ յայտնի է, ով իմ Տէր,
Որ սատանէն տընաւեր
Քո սուրբ ձեռքից մինչ անգամ
Խաբեց հանեց հայր Ադամ։

Քեզ յայտնի է, Ե՛հովայ,
Որ ամբարիշտն սատանայ
Պատրեց երբեմն մի Վասակ,
Որի ձեռքով բաժանեց
Մէր ու մանուկ, ծեր հասակ։

Քեզ յայտնի է, Տէր միայն,
Որ սատանի խորհրդով
Երբեմն մի չար Մեհրուժան
Խաղաղ սրտով, անխռով
Ի հուր թափեց շատ մատեան,
Փակեց կնքեց ժամ խորան։

Գիտես դու այն սատանայ,
Որ իւր հուժկու գնացքով
Որսաց երեք քահանայ.—
Պետրոս Սահակ և Զանգակ,
Որոնք թողին ուրացան
Իրենց պաշտօն պատարագ։

Գիտես դու այն սատանայ,
Որ վեր հանեց չար գոռոզ

Ցազկերտ Շապուհ ու Պերոզ,
Գիտէս սոքա անընդհատ
Բերան առան մեր հուատ։

Քեզ յայտնի են, ով իմ Տէր,
Մուսէ Մահմետ Աբդլլայ,
Որոց ձեռքով սատանայ
Վառեց խաշեց մեր երկիր,
Միշտ անելով տարագիր։

Քեզ յայտնի են կոչմ Պէքիր,
Թէ ոնց եղան անբաժան
Սատանայի որդեգիր.
Որոց ձեռքից տաք հալաւ
Իրենց աղգն էլ չը հագաւ։

Գիտես դու այն սատանայ,
Որ Հոլ Հասան ու Եզիտ
Բռնեց իրեն պաշտօնեայ,
Որոց ձեռքից կուշտ բլիթ
Ոչ հայ կերաւ, ոչ եզիտ։

Գիտես դու այն սատանայ,
Որ ամեն տեղ կամարար
Ընտրեց իրեն Լէնկթէմուր,
Որի ձեռքից մի պարզ ջուր
Ոչ հայ խմեց և ոչ թուրք։

Քեզ յայտնի է չար Տուղրիլ,
Որն իւր ձեռին վէմ ու գիլ,
Երբ արշաւեց մեր երկիր,
Գիտես թէ ի՞նչ դուռ դրկէց
Այս սատանէն խորտակեց։

Քեզ յայտնի է ժանտ Բուղայ,
Ո՞վ նրանից չէր դողայ.
Երբ սա մտաւ Հայաստան,
Որի երդկից լաց ու թաց
Զըհասաւ քեզ՝ ով Աստուած։

Չես յիշում դու լիրբ Ցուսուփ,
Թէ ինչ փոսեր և ինչ գուբ
Փորեց մեր խեղճ Ազգի դէմ.
Ո՞ւմ դուռը, կամ ո՞ւմ կուռը
Չըշախշախեց սրա սուրը։

Չես յիշում դու Զարմաղան.
Էս սատանի մեծ տըղան
Երբ գլորուեց Հայաստան,
Ո՞ր մի տանից թան թացան
Չըվերացան, չըքաշցան։

Չես յիշում դու Ալփասլան—
Այս սատանի միակ սան.
Թէ չես յիշում այս գազան,
Իւր չարութեան սև պտուղ
Ցիշիր Անին մեր կործան։

Չես յիշում դու Նատրշահ,—
Որին խեղդեց Գրողն ու մահ.
Այս սատանի չար հրեշտակ
Ո՞ւմ չըտուեց ոտի տակ,
Ի՞նչտեղ չարեց բրիշակ։

Ծանօթ է քեզ՝ Բաբերար,
Եւ սատանի կամարար
Մեծն ի չարս Շահաբաս,
Որ սոսկալի լրբութեամբ
Խեղդեց Հայոց հանապազ։

Իսկ «ի չար զորութենէ նորա»
Մեզ ինչ մնաց, էլ ինչ կայ.

Ի զորութենէ նորա
Դրին տուինք սև հողին,
Անին դրինք նրա կողին։

Ի զորութենէ նորա
Մեր սուրբ տեղիք գերադաս
Չրին տուինք մաս առ մաս։

Ի զօրութենէ նորա
Մեր չէն գեղեր հայաշատ
Եղան աւեր անապատ։

Ո՞ր վինն ասեմ, ով իմ Տէր,
Որ սատանէն տընաւեր
Մեզ չէ տուել կոծել լալ
Իւր զօրութեամբ թունաբեր։

Աչացս առաջ քանի կան
Մեր տառապեալ Մուշն ու Վան,
Եւ նրանցից բաժանուած
Հազար հայեր անպաշտպան.

Աչացս առաջ քանի կան
Կարին Զէյթուն ու Սասուն,
Եւ նրանցից վերացած
Այրք և կանայք փափկասուն.

Աչացս առաջ քանի կան
Մոխիր դարձած հայ գեղեր,
Անմեղ արեամբ լղոզուած
Դաշտ անապատ, շատ տեղեր.

Աչացս առաջ քանի կան
Մեր հէր Բագուն Երևան,
Եւ սոցա հետ սուգ նստած
Շուշին Շարուր Նախչուան.

Աչացս առաջ՝ դէն ձեռին
Քանի դեռ կան լիստուած
Թուրքի որդին ու քեռին,
Եւ վինչում են դաղդաղած
Սատանայի խորհրդով
Աշխարհս շինել արեան ծով.

Պիտի խնդրեմ աղերսեմ,
Եւ միշտ քեզ Տէր՝ այս ասեմ,—

Որ պահես մեզ, մեր Աշխարհ,
Որ չըկոխուենք համարձակ
Սատանայի մահաբեր
Ծուռ ու ճնկլատ ոտի տակ.
Որ չըկորչենք հանապազ
Թէ լիովին, թէ մաս մաս
Սատանայի կամարար
Պաշտօնէից ձեռքի տակ։

Սահակ վարդ. Ամատունի.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶԻՉԸ

(Թարգմ. Գր. Պեսրովից).

Քրիստոսի մեծ Կարապետ Յովհաննէսը երկար տարիներ առանձնութեան մէջ պահքով ու աղօթքով պատրաստւում էր իւր քարոզութեան համար։ Յորդանանի կողմի անապատում, միայնութեան մէջ նրա մտքից շատ խոր խորհուրդներ էին անցնում, շատ բաներ զգում իւր սրտում, շատ բան էր սովորում անապատի լռութեան մէջ, իւր հոգու խորքերում Աստուծոյ ձայնին ականջ դնելով։ Ամայի անապատը իւր աւազով և մերկ ու մռայլ քարերով մարդկանց հոգիներն էր յիշեցնում նրան։ Մարդկանց սրտերը դատարկ ու ամայի են. կարծես ամեն ինչ քարացած է նրանց մէջ։ Սպասում են Փրկչին, աղօթում են երկնաւոր հօրը, որ երկնքի արքայութիւնը գայ երկրի վրայ, սակայն խոստացեալ Մեսիան գալով՝ կըգտնէ արդեօք ճանապարհ դէպի մարդկանց սրտերը։ Բոլոր ճա-